28. ԱՍԼԱՆԻ ՊԵՍ ՄՏԱՎ, ԿԱՏՎՈՒ ՊԵՍ ԵԼԱՎ

Մե հարուստ մարդմ է կէղի. էղ մարդ խղճի տեր չէր. ֆուխարուն աչկող չէր։ Աստված զարկեց էդ մարդու դլխուն, հարըստութենը առավ մոտեն։ Էդ մարդ վերջի թոշակին (թշվառություն) արժանացավ։

Էդ մարդ աչկեց տեսավ օր ապրելու ուրիշ ճար մը չկեր։ Աչկեց տեսավ օր թե իր ժամանակին հարուստ ինք, ձեռքես ի գնաց հարստութեն, ասեց ուր կնկան.

— Ես զղջացի օր հարստութենս կորուստ տվեցի, մեզի ապրելու ճար չկա ըտա տեղ, ես պըտի երթամ ղարիր էրկիր աշխատիմ։ Էստեղ ամեն մարդ կճանչնա, թե ես ինչ մարդ եմ. ամոթ է ըստեղ աշխատելը։ Ղարիր էրկիր մարդ մը ընձի չի ճանաչի։

Առավ, էլավ գնաց։ Գնաց օտար էրկիր, աստված աջողեց էղավ մե ոզիրի սուֆրաչի։ Օխտը տարի տևեց ըդ սուֆրաչիութենը։

Ավուր մեկը էդ վազիրը՝ թագավորը, մեկել վազիրներ պատիվ էրեց ուր տանը։ Նստած ին էսպես վըր սուֆրին, թագավոր վեկալեց էդ վազիրին, որ իրեն թաքլիֆ էրեր է (հրավիրել է), ըսավ.

— Վազի՛ր, քու սուֆրաչին չի՞ տաս ինձ սուֆրաչութուն էնե։

Վազիր լէ վերցավ ըսավ թե.— Հոգին, միչակ քում չէ, հ՚ըմեն քումն է, ես տվեցի սուֆրաչին քրդի։

Լալեն գնաց վազիրին խաբար տվավ, ըսավ, թե.— Թագավոր վերցուց քրդի սուֆրաչի։

Սուֆրաչին շատ մը նեղեցավ, լաց էղավ։

Լալեն վերցուց ըսեց.— Զուրմի հիմա դու վազիրին իր սուֆրաչի, հիմա էղար թագավորի սուֆրաչի, պետք է ուրախնաս, ինչո՞ւ գիլաս։

— Քեզնե ի՞նչ պահեմ, աստծանե չպահեմ, էս օխտը տարի ես, վազիրի ախչիկը աչք կանք իրարը (սիրահարված ենք), հեռանա աչից, օտարանա սրտից։ Ես էրթամ թագավորի հ՝առեճ, ախչիկն ի ձեռքես կէրթա։

Էկավ լալեն թագավորին խապար տվավ, թե տղեն շատ դիժարցավ։

Հարցուց թագավոր լալի մոտեն, թե.— Ինչի՞ դիժարցավ սուֆրաչին։

— Ըսիս, վազիրի ախչկա սիրտը տղին իրար կա։

Թագավոր վերցուց թաքլիֆ էրող (հրավիրող) վազիրին, թե.

— Ես սուֆրաչին ուզեցի, դու տվեցիր, պըտի քու ախչիկ լէ տաս էս սուֆրաչուն։— Էն լէ տվեց։

Թե.— Ես տվեցի զախչիկն, դու ի՞նչ պտի տաս էն ախչկան ու տղին, օր էրթան ուրանց իդարա էնին։

Թագավոր լէ ըսեց, թե.— Ես տվեցի ֆիլան աղեկ տներ ուրանց, զինք լէ էրեցի քե պես վազիր մը։

Էն առավ ուր մուրազին հասավ։

Էդ մարդ օր առաշի վախտ հարուստ էր՝ խղճի տեր չէր, աստված մե քննող մարդ է՝ կիտա իշխանությունը, կփորձե ղհավատը։ Էդ մարդ հիմա շատ մը խղճի տեր է, պատճառն ի՞նչ է՝ նեղություն լէ տեսավ, լիություն լէ տեսավ։

Էն մարդիկ գացին նստան ուրանց տան մեշ, իհարկե, մարդ մը օր վազիր էղավ, թագավորի պալատը պտի գտնվի։ Էն մարդ կէրթեր, կիգեր։

Ավուր մեկի թագավորն ու ուր լալեն էլան դավրիշի պես կզվռնեն. տեսան օր մեկ սուրիաթ փանճարեն (լուսամուտ) օղլուշաղի մը ձեռք էր, կխաղցուցեր, ինք լէ շատ խորոտիկ էր, ուր նման չճարվեր։ Թագավորի աչք առավ էդ օղլուշաղին, ըսավ.

— Լալա՛, էդ օղլուշաղ ինձ բեր։ Ես կէրթամ մըր տուն։

Թագավորը գնաց ուր տուն։ Լալեն գնաց օր ախչիկ առներ տաներ թագավորի կուշտ։

Ախչիկ ասավ.— Հարկ է (իհարկե) ամեն մարդ լէ նամուս ունի։ Թագավորի խոսք,— ըսավ,— մեկ է, էրկուս չէղնե, ինչ ժամանակին իմ էրիկը մեկ դով մը (տեղ) գնաց, էն ժամանակին իհարկե պիտի գամ։

Թագավորը լալեն խանչեց.— Դավդատար,— ասավ,— գնա՛ առ էկո։

Սահատ իրիկուն տասվերկուսին (ալա թուրքիա) դավդատար բերեց։

Թագավոր ըսավ թե դավդատարին.— էս իրիկվորե մինչև հարի լուս ֆիլան խաղային (շբջան) դավտարը դուրս հանիս։ Ցոթ տարվան բախիեն (տուրք) դետին մնացեր է, օր ֆիլան թազա վազիր ճամփըցում օր բախիեն ժողովե։

Սապախտան օր բարի լուս բացվավ, էն մարդը դրեցին գյամին, օր էրթա բախիեն ժողվե։

Թագավոր տեսավ օր էն մարդ նստավ գյամին, ինք շուտ մը էկավ վազիրի դռան վրեն։ Վազիր տեսավ գյամուց, մահանա էրեց, էկավ ուր տուն տեսավ, օր ուր կինը ընկեր էր թագավորի անթե (ղոլթուղի) տակ սանդուխներ վր կը հաներ։ Վազիր տեսավ օր ուր կնիկ ու թագավոր էլան վերև։

Թագավոր վերցուց, կնկան ըսեց թե.— Արի մոտս ի։

Կնիկը վերցուց ըսեց.— Դու իմ տերն իս, ես ինչպե՞ս իգամ քու մոտ,— թե,— մինակ իմ տեր չիս, բովանդակ աշխարքի տերն իս, իմա՞լ իգամ քու մոտ։ Կնիկ ճարմ չկարցավ էրեց։ Կնիկ վերցուց թագավորին թե.— Աստծու ձեռքն օր քու սրտի վրա է՝ էնիկ վերցու, օր ես իգամ քու մոտ։

Թագավոր ճարըմ լէ չկրցավ էրեց, ըսավ.— Թե ես ըսիմ վերցուցի, ես աշխարհական կդառնամ, ուրեմն դու ընձի ախչիկ ես։

Թագավորն ելավ գնաց ուր տուն։

Օրմ լէ, ժամանակը լըմեցավ, վազիր բախիեն ժողվեց, էկավ ի տուն։ Գալու պաշտան, մե ձեռք հադեստ (հագուստ) կնկան բերեց հագուց։ Կնկան ըսեց թե.

— Ելի, առ էս ֆանար (լապտեր), գնա՛ քու պապու տունը։ Ինչ ժամանակին կարմիր ֆանար քու ետև էկավ, էն գյախ կիգաս։ Ուրիշ ով իգա, չիգաս։

Կնիկը ըսավ թե. «Իմ էրիկ նոր էկավ, գալող էրթըցող կա մեր տուն, էն ապով ա ճամբըցու ինձ պապու տունն»։ Ելավ գնաց։

Շատ մը քշեց էդ մեջ (երկար տևեց), վազիր մտածեց թե. «Ես իմ աչքով տեսա օր իմ կնիկը ղթագավոր առավ ու էլավ վերև, ես ինչպե՞ս թագավորի էրթած տեղը գնամ, ուրեմն էդ կնիկ ինձի հարկավոր չէ»։

Ցոթ տարի լըմեցավ օր կնիկ պապու տուն է։ Ավուր մեկին էդ

աներ վազիր փեսա վազիրին ըսավ, թե.— Ինչո՞ւ կնկանդ տիրութուն չես էնի, ես նե տեր կէղնիմ, նե թարկ կիտամ։

Խոսք խոսքի ընցավ, գործ մեծըցավ, դավայի ընկավ, ընկավ մախկամեն (դատարան), վեց մախկամա էղավ, ընդոնց գործը չիմացվավ, որ դատ էնեն։ Գործը մեծըցավ գնաց հասավ թագավորին, թե էս տեսակին մախկամըմ կա, իդա վեց անգամ մախկամա կէղնինք, էդ մարդուց մախկամեն չենք հասկընա։

Գործ ընկավ թագավորին, թ'արի նստի մախկամեն, ընդոնց մախկամեն էրե։ Թագավորը էկավ, հագավ խազու (դատավորի) շորեր, նստավ մախկամեն, օր էդ մարդուց մախկամեն էնե։ Խանչեց փեսա վազիր ու աներ վազիր, բերեց էրկուս լէ նստեցրուց մախկամի մեջ։ Հարցուց աներ վազիրից թե.

— Քու դավեն ի՞նչ է, ըսե, իդա վեց անգամ օր դու մախկամա կէղնիք չիստկավ. էկավ հասավ ընձի։ Օրենք է, ըսե քու դատը,— ըսեց աներ վազիրին։

Աներ վազիր ըսեց.— Ես իդա մարդուն տվեր եմ մեկ բաղ մը, էն տեսակի բաղ մը, օր թագավորներուն չի ճարվի. չորցեր է բաղը, թափեր է թփեր, չորցեր է աղբուրը, էդ մարդ լէ տիրութուն չի էնե, թարք լէ չի տա։

Խաղին հարցուց փեսա վազիրի մոտեն, թե.

— Ինչի՞ տեր չես ըլնի էդ բաղին։

— Ինչքան օր իմ աներ վազիր կասե, կես հլա չասեր, էնման խորոտիկ բաղ է, ավուր մեկին Ասլանի ճամբախ տեսա բաղի մեջ, էն ապով բաղին տիրութուն չըմ էնի։

Թագավոր հ'իմցավ, թե. «Ես ինք մտա իդա տան մեջ, չկրցա ճարըմ էրեցի», մտածեց թագավոր՝ «էդ խոսք վըր ընձի է», ըսեց.

— Ասլանի պես մտա բաղի մեջ, կատվու պես դուրս էկա, գնա՛, բաղիդ տիրութուն էրե։

Փեսա վազիր կարմիր ֆանար ճամբըցուց կնկա ետև, կնիկ ելավ, էկավ, վայելեցին մեկ մեկին։

Աստծուց իրեք խնձոր իջավ. մեկը ըսողին, մեկը՝ լսողին, մեկ լէ՝ անկաճ էնողին։